ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵՎ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԵՎ

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԵՎ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության շուկաների կարգավորման պետական մարմինը (այսուհետ՝ միասին «Կողմեր», առանձին՝ «Կողմ»),

ընդունելով իրենց համապատասխան ձեռքբերումները մրցակցության ոլորտում,

գիտակցելով, որ փոխադարձ համագործակցությունը կարող է հանգեցնել Կողմերի պետություններում մրցակցային քաղաքականության և մրցակցային օրենսդրության առավել արդյունավետ կիրարկմանը,

հաշվի առնելով, որ մրցակցության օրենսդրության արդյունավետ կիրարկումը կարևոր նշանակություն ունի կողմերի պետությունների շուկաների արդյունավետ գործունեության, սպառողների բարեկեցության խթանման և երկկողմ առևտրի համար,

հաշվի առնելով, որ իրենց ընդհանուր շահն է համագործակցել համապատասխան ազգային օրենսդրության, շահերի և ողջամտորեն հասանելի ռեսուրսների հետ համահունչ,

գիտակցելով, որ յուրաքանչյուր Կողմ կգործի իր գործառույթների և պարտականությունների կատարման շրջանակում՝ համաձայն Կողմերի պետությունների ազգային օրենսդրության,

հիմնվելով հավասարության և փոխադարձ շահերի սկզբունքների վրա,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1
Նպատակը և սահմանումները

1. Սույն Փոխըմբռնման հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) նպատակը մրցակցության ոլորտում Կողմերի միջև համագործակցության խթանումն է:

2. Հուշագրում տերմիններն ունեն հետևյալ սահմանումները.

ա) «մրցակցության օրենք կամ մրցակցության կանոններ» նշանակում է.

- Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի կամար «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքը և օրենքի ներքո ընդունված որևէ իրավական ակտ:
- Չինաստանի Ժողովրդական Հանրապետության շուկաների կարգավորման պետական մարմնի համար Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հակամենաշնորհային օրենքը, ինչպես նաև դրանում կատարված որևէ փոփոխություն և օրենքի ներքո ընդունված որևէ իրավական ակտ:

բ) «հակամրցակցային գործողություններ» նշանակում է ցանկացած վարք կամ գործունեություն, որոնք սահմանվում են Կողմերի պետությունների համապատասխան մրցակցային օրենսդրությամբ:

3. Համագործակցությունն իրականացվելու է համաձայն Կողմերի համապատասխան ազգային օրենսդրության:

Հոդված 2
Համագործակցություն և հաղորդակցություն

1.Կողմերի միջև համագործակցությունն իրականացվելու է Կողմերի համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հետևյալ հիմնական ուղղություններով յուրաքանչյուր Կողմի ողջամտորեն հասանելի ռեսուրսների շրջանակներում.

ա) փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկությունների և կարծիքների փոխանակում, ինչպիսիք են՝ մրցակցային օրենսդրության կիրարկման ոլորտում վերջին զարգացումները, մրցակցության օրենքի կիրարկման փորձը և մասնագիտացված ուսումնասիրությունները,

բ) տեխնիկական համագործակցություն յուրաքանչյուր Կողմի մրցակցային քաղաքականության և մրցակցության օրենսդրության կիրարկման ոլորտում կարողությունների զարգացման նպատակով՝ վերապատրաստման ծրագրերի, համաժողովների և համատեղ ուսումնասիրությունների միջոցով,

գ) օրենքի կիրարկումից առաջ կամ հետո ծանուցում հակամրցակցային գործողությունների դեմ, որոնք կարող են ազդեցություն ունենալ մյուս Կողմի վրա,

դ) անհրաժեշտության դեպքում օրենքի կիրարկման ոլորտում համակարգում և համագործակցություն, երբ Կողմերը ներգրավված են փոխադարձ առնչվող գործերում:

2. Արդյունավետ հաղորդակցության իրականացման համար Կողմերը նշանակել են հետևյալ կոնտակտային ստորաբաժանումները.

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի համար – Միջազգային համագործակցության և քաղաքականության մշակման վարչության միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժին (էլ. փոստ՝ info@competition.am),

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության շուկաների կարգավորման պետական մարմնի համար – Մրցակցային քաղաքականության համակարգման վարչության միջազգային համագործակցության բաժին (էլ. փոստ՝ icam@samr.gov.cn)

3. Կողմերի միջև հաղորդակցությունն իրականացվում է հեռախոսային կապի, էլեկտրոնային փոստի, տեսահամաժողովների, հանդիպումների կամ համապատասխան այլ միջոցներով:

Հոդված 3

Գաղտնի տեղեկություններ

1. Սույն Հուշագրի համաձայն՝ ցանկացած տեղեկատվության տրամադրումը կլինի յուրաքանչյուր Կողմի հայեցողությամբ:

2 Յուրաքանչյուր Կողմ, չհակասելով իր ազգային օրենքներին և իրավական ակտերին, կպահպանի սույն Հուշագրի ներքո մյուս Կողմի տրամադրած ցանկացած տեղեկատվության գաղտնիությունը:

3. Անկախ սույն Հուշագրի որևէ այլ հոդվածից, յուրաքանչյուր Կողմ պարտավորված չէ տրամադրել որևէ տեղեկություն մյուս Կողմին, եթե այդ տեղեկության տրամադրումը արգելված է այդ տեղեկությունը տիրապետող Կողմի պետության օրենսդրությամբ, կամ եթե դա չի բխում մրցակցային օրենսդրությունը կիրառող Կողմի շահերից:

4. Մի Կողմի տրամադրած տեղեկությունը մյուս Կողմին, բացառությամբ հրապարակայնորեն հասանելի տեղեկության, սույն Հուշագրի շրջանակներում տեղեկությունը ստացող կողմը կօգտագործի միայն իր մրցակցության օրենսդրության արդյունավետ կիրարկման նպատակով և չի փոխանցի որևէ այլ մարմնի կամ երրորդ կողմի առանց տեղեկությունը տրամադրող Կողմի գրավոր համաձայնության:

Հոդված 4
Գործունության կազմակերպում

1. Գործունեության օրակարգը, վայրը և այլ տարրերը Կողմերը սահմանում են անհատապես՝ փոխադարձ համաձայնությամբ:
2. Յուրաքանչյուր Կողմ հոգում է սույն Հուշագրի իրականացման հետ կապված իր ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի համաձայնությամբ:

Հոդված 5
Վեճերի լուծում

Սույն Հուշագրի մեկնաբանումից և կատարումից բխող վեճերը կլուծվեն Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով և չեն ներկայացվի որևէ դատարան կամ երրորդ կողմի:

Հոդված 6
Պարտադիր ուժ

Սույն Հուշագիրը կնքված է Կողմերի միջև համագործակցությունն ամրապնդելու և զարգացնելու նպատակով և չի հանդիսանում միջազգային պայմանագրերով կամ ներպետական օրենսդրությամբ նախատեսված Կողմերի պետությունների համար պարտադիր կատարման ենթակա համաձայնագիր:

Հոդված 7
Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու օրվանից և կգործի մինչև դրա գործողության դադարեցումը:

2. Սույն Փոխըմբռնման հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելով սույն Փոխըմբռնման հուշագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին՝ նախատեսված դադարեցման օրվանից առնվազն երեք (3) ամիս առաջ:

3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Փոխըմռնման հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կկազմվեն առանձին փաստաթղթի տեսքով: Դրանով կազմված փաստաթղթերը կկազմեն

սույն Փոխըմռնման հուշագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն Փոխըմռնման հուշագրի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

4. Անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են սահմանել սույն Հուշագրի իրականացման մանրամասն կանոններ:

Ստորագրված է 2025 թվականի օգոստոսին 31-ին ք. Պեկինում երկու բնօրինակից՝ յուրաքանչյուրը՝ հայերեն, չինարեն և անգլերեն լեզուներով, որոնք ունեն նույն իրավաբանական ուժը: Հուշագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների առաջացման դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն լեզվով կազմված օրինակին:

Հայաստանի Հանրապետության մրցակցության և սպառողների շահերի հանձնաժողով	ՉԺՀ շուկաների պաշտպանության կարգավորման պետական մարմին